



ՀՀ Կոտայքի մարզի <<Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2021-2026 թվականների զարգացման



ԾՐԱԳԻՐ



Կազմեց՝

Նաիրա Ալեքսանի Բաբայանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
1. Դպրոցի առաքելությունը	5
2. Դպրոցի անձնագիրը, ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին	7
3. Դպրոցի գործունեության իրավիճակի վերլուծություն/ՈւԹՀՎ վերլուծություն/, հաստատության գործունեության` առանձնացված յուրաքանչյուր ոլորտի խնդիրները	9
4. Հաստատության ոլորտների նպատակները և խնդիրները, սահմանված նպատակների իրագործմանն ուղղված համապատասխան գործողությունները	14
4.1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	14
4.2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն	15
4.3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը	16
4.4. Կառավարման և խորհրդակցական մարմիններ, համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	17
4.5. Աշակերտական համակազմը	19
4.6. Մանկավարժական համակազմը, նրա որակական բարելավումը	20
4.7. Ուսումնական միջավայրը: Ուսումնական և դաստիարակչական համակարգի կատարելագործում	21
4.8. Կրթության որակը, մատչելիությունը և մասնակցությունը	23
4.9. Տեեեխիսնոլոգիաները և նորարարությունները	26
5. Ծրագրի իրականացմանն ուղղված գործողությունները, ակնկալվող արդյունքները , ժամանակացույցը	27
6. Ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը	28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2021-2026 թվականների սույն ծրագիրը մշակել էմ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի,

«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի» հիմնադրույթների, «Պետական հանրակրթության ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի N16- Ն հրամանի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցի և մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դրանցում առկա խնդիրներն ու հիմնախնդիրները:

Ընտրվելուց հետո սույն հեռանկարային ծրագրի հիման վրա կկազմվի դպրոցի տարեկան և միջնաժամկետ զարգացման ծրագիրը (ԴԶԾ): ԴԶԾ կազմելու համար հստակ պատկերացնում էմ 12-ամյա կրթության առաքելությունը, ավելորդ չի լինի ասել նաև՝ գիտեմ, թե ինչ է ծրագիրը և պլանավորումը:

«Առաքելությունն» այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ:

«Ծրագիրը» պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը:

Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարել էմ գործունեության պլանավորում, որը անհրաժեշտ միջոցառումների ժամկետները և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու, բաշխելու և ծրագրի բյուջեն կազմելու գործիք է:

Մանկավարժության մեջ ընդունված է, որ դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար պետք է բաժանել փուլերի՝

- ա) դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրերի, նպատակների և խնդիրների սահմանում,
- բ) ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,
- գ) ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:

«Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սույն զարգացման ծրագրի մշակման համար կատարել են հետևյալ հաջորդական քայլերը՝

1. սահմանել են դպրոցի առաքելությունը,
2. վերլուծել են առկա իրավիճակը, բացահայտել եղած հիմնախնդիրները,
3. սահմանել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
4. սահմանել են հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները,
5. սահմանել են հիմնական ռազմավարությունները, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
6. սահմանել են ֆինանսատնտեսական գործունեությունը,
7. տվել են ակնկալվող արդյունքները,
8. սահմանել են դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումները:

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի առաքելությունն այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հասատությունը. համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության, մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը:

Դպրոցի առաքելությունը չի կարող ներկայացվել որպես բարի ցանկություն, այլ պետք է վերահսկել ներքին և արտաքին այն բոլոր գործոնները, որոնք էական ազդեցություն ունեն դպրոցի ցանկալի տեսակին հասնելու համար:

Դպրոցի այդ տեսակը դպրոց է բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ օժտված, և՛ սովորական երեխաները, որտեղ այսօր ձևավորվում է վաղվա օրը:

Այդ դպրոցում առկա է՝

- յուրաքնչյուր սովորողի կարիքներին համահունչ ուշադրություն
- սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ բարենպաստ կրթական միջավայր:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ, քաղաքացիական առողջ հասարակություն կրթելու միջոցով:

Դպրոցի առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ եմ ընդունելու զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Նախադպրոցական կրթությունը ապահովում է երեխաների անձի ձևավորման և ընդհանուր զարգացման մակարդակ, որը թույլ է տալիս նրանց հոգեբանորեն պատրաստվել սոցիալական նոր միջավայրին՝ դպրոցին, ձևավորված ֆիզիկական և մտավոր ընդունակությունների շնորհիվ նախապատրաստվել ուսումնառությանը, դպրոցում ապահովել նախադպրոցական և ընդհանուր կրթության հաջորդականությունը և շարունակականությունը, ձևավորել շրջապատող աշխարհի

մարդկանց, հասակակիցների հետ պատշաճ վարվելաձևի վարքագծի կանոններ:

Միջնակարգ դպրոցի առաքելությունն իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ, մատչելի 12- ամյա կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բարձրագույն , նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջնակարգ-մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում կամ անցնել աշխատանքի՝ գտնելով իրենց տեղը կյանքում:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը, շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

2. ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ , ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Կոտայքի մարզի <<Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական (ընդհանուր) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է, որն առաջնորդվում է **կրթության զարգացման պետական ծրագրով**: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): ՀՀ Կոտայքի մարզի <<Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզի <<Գեղաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2003 թվականին, փոփոխությունների է ենթարկվել 2010 թվականին, անվանափոխության հետ կապված՝ 2011 թվականի հունիսի 20-ին և 2013 թվականի ապրիլի 4-ին, 2017 թվականին, 2020 թվականին: Դպրոցը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետեզիստրի Կոտայքի տարածքային բաժնում 2003 թվականի հունվարի 18-ին՝ 42.210.01987 գրանցման համարով, վկայական 03Ա.057309:
2. Դպրոցի հասցեն՝ *Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, գյուղ Գեղաշեն, 1-ին փողոց, 83*:
3. Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, անհատականացման այլ միջոցներ:
4. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ:
5. Համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 31-ի N 471, 473, 475-Ա/Ք և 2017 թվականի հոկտեմբերի 31-ին տրված N 1237-Ա/2 հրամաններով տրված Ա0019, Ա0017, Ա0021, Ա0365 լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.
 1. տարրական ընդհանուր 260,
 2. հիմնական ընդհանուր 270,
 3. միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության գործունեություն 150
 4. նախադպրոցական 60 տեղով:

Դպրոցը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և <<Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

6. Որպես սեփականություն՝ դպրոցն ունի առանձնացված գույք: Դպրոցն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ հայցվոր կամ պատասխանող:
7. Դպրոցը եռահարկ տիպային շինություն է, ունի երեք մասնաշենք՝ նախատեսված 784 աշակերտների համար: Դպրոցի ընդհանուր մակերեսը 5285,14 քմ է և ունի 23000 քմ կլից տարածք: Շահագործման է հանձնվել 1987 թվականին:
8. Դպրոցն ունի 16 առանձնասենյակ, 24 դասասենյակ, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ, 2 առարկայական կաբինետներ, 1 միջոցառումների և 1 մարզադահլիճ, 2

համակարգչային կենտրոն-կաբինետ(49 համակարգիչ, 3 տպիչ, 1 սքաներ, անխափան սնուցման 1 սարք (UPS), 2 տեսապրոեկտոր, 2 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, հեռուստացույց 3, 2 DVD պլեյեր): Դպրոցն ունի գրադարան՝ 72քմ տարածքով, գրքերի ընդհանուր քանակը՝ 14987(դասագիրք, գեղարվեստական, մեթոդական-ծրագրային գրականություն):

Դպրոցն ապահովված է շուրջօրյա խմելու ջրով, սանհանգույցներով, էլեկտրամատակարարմամբ, անհատական սեփական ջեռուցմամբ:

9. 2021 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցում կկոմպլեկտավել է 25 դասարան՝ 651 աշակերտով, նախադպրոցական 2 խումբ՝ 34 սանով:

10. Դպրոցն ունի 66 աշխատող, որից 42-ը ուսուցիչ են, 37-ը՝ բարձրագույն մանկավարժական, 2-ը՝ միջին մասնագիտական կրթությամբ: 42 ուսուցիչներից 9-ը վերապատրաստված են, 1-ը կենսաթոշակային տարիքի է:

10. Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների թիվը հավասար է 16-ի: Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը 21.5 դասաժամ է:

11. Կառավարման խորհուրդը կազմված է 9 անձից:

Մանկավարժական խորհուրդը կազմված է 45 անձից:

Ծնողական խորհուրդը կազմված է 25 անձից:

Դպրոցում գործող խորհրդակցական մյուս մարմիններն են աշակերտական խորհուրդը, 7 մեթոդական միավորումները, որոնք բոլորն էլ ունեն իրենց կանոնադրությունները, աշխատանքային պլանները, գործում են օրենքով սահմանված իրավասությունների սահմաններում:

3. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ (ՈւթշՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Ստորև ներկայացված է դպրոցի գործունեության իրավիճակի վերլուծությունն ըստ դպրոցի գործունեության ոլորտների՝ համաձայն ՈւթշՎ վերլուծության մոդելի

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</p> <ul style="list-style-type: none"> ▪ Դպրոցի շենքը հիմնականում հիմնանորոգված է: ▪ Առկա են 2 համակարգչային կաբինետներ անհրաժեշտ քանակի համակարգիչներով և պլանշետներով: ▪ Դասասենյակները վերանորոգված են և հիմնականում կահավորված նոր գույքով: ▪ Առկա է հիմնանորոգված մարզադահլիճ՝ անհրաժեշտ մարզագույքով: ▪ Առկա է նիստերի դահլիճ՝ անհրաժեշտ կահավորումներով և սարքավորումներով: ▪ Առկա են առարկայական կաբինետներ (ՆԶՊ, շախմատ)՝ անհրաժեշտ գույքով, սարքավորումներով, ուսումնական զենքով (ավտոմատ, օդամղիչ): ▪ Առկա են վարչական կաբինետներ՝ անհրաժեշտ գույքով, տեխնիկական միջոցներով: ▪ Առկա է շուրջօրյա ջրամատակարարում , կոյուղի և անհատական ջեռուցման համակարգ: ▪ Դպրոցն ապահովված է գերարագ ինտերնետային կապով 2 օպերատորներից: ▪ Առկա է ինտենսիվ հատապտղատու այգի կաթիլային ոռոգման և հակակարկտային պաշտպանիչ համակարգերով: 	<p>1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</p> <ul style="list-style-type: none"> ▪ Վերանորոգման կարիք ունեն 4 սանհանգույցները: ▪ Կապիտալ վերանորոգման և գույքով ապահովման կարիք ունի ճաշարանը: ▪ Ջեռուցման համակարգի մոնտաժում հանդերձարաններում: ▪ Ջրահեռացման համակարգի խնդիրներ՝ կապված ջրի հոսքը շենքի հիմքից հեռացնելու հետ, շենքի նկուղի ջրամատակարարման համակարգի մոնտաժում: ▪ Դպրոցին կից մարզահրապարակի կառուցում, հնարավորությունների համապատասխանեցումը սովորողների պահանջներին, ֆուտբոլի դաշտի կառուցում: ▪ Լաբորատորիաների վերազինումը նոր ժամանակակից լաբորատոր սարքավորումներով: ▪ Տեխնոլոգիայի և ներառական կրթության կաբինետների կահավորում : ▪ Դպրոցի բակի ասֆալտապատում:

<p>▪ Առկա է արևային կայան, որը դպրոցի կարիքներից զատարտադրում է 3-4 անգամ ավել էլեկտրաէներգիա:</p> <p>2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը</p> <p>▪ Բյուջետային հատկացումների, ուղղությունների և ծախսերի արդյունավետ պլանավորում և իրականացում, որի արդյունքում խնայված ազատ դրամական միջոցների հաշվին իրականացվում է դպրոցի շենքային պայմանների շարունակական բարելավում, ուսումնանյութական բազայի կատարելագործում:</p> <p>▪ Ֆինանսական հոսքեր, որոնք կձևավորվեն դպրոցի ուսումնարտադրական գործունեության ծավալման արդյունքում՝ այգի, արևային կայան:</p> <p>▪ Հովանավորների՝ համագյուղացիներ, դպրոցի շրջանավարտներ, կազմակերպություններ, կողմից ֆինանսական միջոցների հնարավոր ներդրումներ:</p> <p>3. Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր: Դրանց վարումը: Ուսումնական հաստատությունն ունի անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ամբողջական փաթեթ՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկի:</p> <p>Դպրոցի տնօրենը պետք է վստահ լինի, որ ցանկում թվարկված փաստաթղթերը լրացվում են սահմանված կամ ինքնաշխատ կարգով և դրանց վարումը համապատասխանեցված է դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:</p> <p>4. Կառավարման և խորհրդակցական մարմիններ</p> <p>▪ Կառավարման խորհրդի սրտացավ</p>	<p>2. Մեծ ծավալի աշխատանքներ՝ ճաշարանի հիմնանորոգում, մարզահրապարակի կառուցում, շենքի հիմքի ամրացում հնարավոր է կատարել մի քանի տարվա ընթացքում ազատված և տնտեսված ֆինանսական միջոցներով, որը առաջացնում է լրացուցիչ ռիսկեր:</p> <p>3. Մովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմերը.</p> <p>▪ Ուսման մեջ առանձին աշակերտների մոտ մոտիվացիայի ցածր մակարդակ և ներգրավվածության պակաս:</p> <p>4. Ուսումնական հաստատության գործունեությունը, նպատակներին և</p>
---	---

<p>և հարգալից վերաբերմունքը դպրոցի խնդիրներին:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Դպրոցի խնդիրների և կրթության որակի նկատմամբ ծնողների ուշադրություն: ▪ Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առողջ և արդյունավետ համագործակցություն : <p>5. Աշակերտական համակազմը</p> <ul style="list-style-type: none"> ▪ աշակերտական համակազմի համալրումը, որը պայմանավորում է դպրոցի գոյությունը, զարգացումը, ֆինանսական, նյութական բարեկեցիկ վիճակը, դպրոցի առջև ծագած շատ խնդիրների /նյութատեխնիկական բազա, ուսումնական անհրաժեշտ միջավայր, աշխատավարձ և այլն/ լուծումը կատարվում է հիմնականում համայնքի երեխաների հաշվին: ▪ դպրոցի աշակերտական համակազմը ձևավորվում է նախադպրոցական խմբերից մինչև 12-րդ դասարան: ▪ Տարբեր սպորտային և գեղարվեստական խմբակների առկայությունը: ▪ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բարոյական, ռազմահայրենասիրական, սպորտային դաստիարակությանը: ▪ Ակտիվ մասնակցություն դասապրոցեսին և համադպրոցական տարատեսակ միջոցառումներին, առարկայական օլիմպիադաներին, մարզական, մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցություն, հաջողություններ ու մրցանակներ: ▪ ՏՀՏ կիրառելու հմտություններ: <p>6. Մանկավարժական համակազմը</p> <ul style="list-style-type: none"> ▪ Մանկավարժները և աշակերտները մեկ միասնական համակարգ են և նրանց գործունեությունը փոխկապակցված է: ▪ Մանկավարժական համակազմում առկա է կարգապահության բարձր որակ, այն համալրված է մասնագիտական կարևոր 	<p>խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը լիազոր մարմիններին, ֆիզիկական անձանց, անմիջական մասնակցություն դպրոցի առջև ծագած խնդիրների լուծմանը:</p> <p>5. Կրթության նկատմամբ հետաքրքրությունների նկատմամբ անկման տենդենցը:</p> <p>6. Ճիշտ գնահատել մանկավարժական պոտենցիալը, ունենալ գնահատման ճիշտ չափանիշներ: Ուսուցչին պետք է գնահատել ըստ նրա կրթության ու փորձառության, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա</p>
--	---

<p>որակներ ունեցող,բանիմաց մասնագետներով:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Մանկավարժների կողմից դասավանդման փոխներգործուն,աշակերտակենտրոն մեթոդների կիրառում: ▪ Առկա է մանկավարժական կոլեկտիվի համախմբվածություն,նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտ: ▪ Դպրոցն օժանդակում է կադրերի շարունակական կատարելագործմանը՝ հնարավորություն տալով աշխատանքային առաջխաղացման ձգտողներին զարգացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները: ▪ Վարչական աշխատանքների օպերատիվ կազմակերպումը: ▪ Համադպրոցական միջոցառումների բազմազանությունը: ▪ Ակտիվ մասնակցություն տարբեր ծրագրերին: ▪ Հմուտ և փորձառու ուսուցիչներ ունենալը: ▪ Մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով՝ ապահովելով սերնդափոխությունը: ▪ Մանկավարժների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորմանը: <p>7.Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Առկա է ակտիվ համագործակցություն համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ: ▪ Նման համագործակցությունը խթանում է մանկավարժների,սովորողների նախաձեռնություններին,դրանք կյանքի կոչելուն,անհրաժեշտ ուսումնական միջավայրի ձևավորմանը,սովորողների արտադպրոցական դաստիարակության կազմակերպմանը <p>8.Ուսումնական միջավայրը</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ուսումնական միջավայրի ճիշտ գնահատումը և բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլերը : ▪ Դասասենյակների և առարկայական կաբինետների,դասագրքերի և այլ 	<p>ունեցած ներդրման և հաջողությունների:</p> <ul style="list-style-type: none"> ▪ դասավանդման այնպիսի մեթոդների և հնարների կիրառումը, որոնք աշակերտներին հնարավորություն կտան ձեռք բերել բավարար գիտելիքներ՝ ապահովելու կրթության շարունակականությունը ԲՈՒՀ-երում և մասնագիտական ճիշտ կողմնորոշումը: <p>7.</p> <p>8.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Դպրոցում ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին:
---	--

<p>գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի՝ դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունը:</p> <p>9. Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների</p> <ul style="list-style-type: none"> ▪ կրթական գործընթացում հանձնարարությունները, գործողությունները կատարվում են ժամանակին, անսխալ, ոչ ձևական ▪ մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ. կատարվող աշխատանքները վերլուծվում են, մշակվում են թերությունները և դրանց հետևանքները վերացնելու գործողություններ: ▪ կրթական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ ձևով, մանկավարժները մեթոդապես լավ են պատրաստ-ված, և նրանց կողմից դասերը, միջոցառումները պլանավորվում են, համապատասխանում են նպատակին: <p>10. Տեխնոլոգիաները և նորարարությունները</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ռեսուրսներով ապահովվածությունը. ▪ Էլեկտրոնային գրատախտակներ: ▪ Համակարգիչներ, ուսումնական հարուստ նյութեր: 	<ul style="list-style-type: none"> ▪ Ծնողների և երեխաների սոցիալական պատվերը պետք է ներգրավվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում: <p>9.Նոր նախաձեռնություններ, բարձր պատասխանատվություն կատարած աշխատանքի նկատմամբ և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների կողմից առարկայական չափորոշիչներին համապատասխան որակ ապահովելու համար</p> <ul style="list-style-type: none"> ▪ Տարիքային հոգեբանությանը տիրապետելը և երեխաների իրավունքները հարգելը <p>10. Ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասերի ընթացքում</p> <ul style="list-style-type: none"> ▪ Տեխնոլոգիաների ժամանակակից զարգացումներին տիրապետելը և համընթաց գիտելիքների խորացումը
---	--

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան ձևավորում են այն ուսումնական միջավայրի ֆիզիկական բաղադրիչը, որտեղ տեղի է ունենում երեխայի ուսուցման և դաստիարակության գործընթացը:

Ուսումնական միջավայրի ճիշտ գնահատումը և բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլերը չափազանց կարևոր են մյուս հիմնախնդրի՝ կրթության որակի բարելավման համար:

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի՝ դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մի այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Դպրոցը պետք է ձգտի, որ

- վերանորոգված և կահավորված լինեն դասասենյակները և առարկայական կաբինետները,
- ապահովված լինի դասագրքերով, այլ ուսումնական գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու մշակույթ:

Ծնողների և երեխաների սոցիալական պատվերը պետք է ներգրավվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում:

Ուսումնական պլանը պետք է կազմվի սովորողների, ոչ թե ուսուցիչների կաբինետներին համապատասխան:

- Ուսումնական (ֆիզիկական) անհրաժեշտ միջավայր դպրոցում ձևավորելու համար պետք է հետևողական լինել դպրոցը՝ պետական ծրագրերով առաջնահերթությամբ նորոգվող դպրոցների շարքում ընդգրկվելու հարցում՝ հատկապես շենքի հիմքի ամրացման և ապաստարանի հետ կապված խնդիրները
- իրականացնել ճաշարանի հիմնանորոգումը, լուծել սանհանգույցների, կոյուղու, ջեռուցման համակարգի շինարարական խնդիրները
- ավարտել մարզահրապարակի, ֆուտբոլի դաշտի կառուցումը
- ավարտել դպրոցի տարածքի ցանկապատման աշխատանքները,
- իրականացնել կաբինետների ստեղծման ձևավորման աշխատանքներ, ապահովել սենյակների հարմարեցումը դպրոցի կրթական պահանջներին,
- հարստացնել գրադարանը գրականությամբ և էլեկտրոնային ձեռնարկներով: Ե. Դպրոցը համալրել համակարգչային նոր սարքավորումներով,
- ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել նոր համակարգիչներ,
- հովանավորներ փնտրել գործարանների, դպրոցի բոլոր տարիների շրջանավարտների մեջ:

4.2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

Դպրոցի գործունեության շատ կարևոր ֆինանսական ուղղությունը պայմանավորված է նրա բյուջետային հնարավորություններով, քանի որ դպրոցի հիմնական, հաճախ էլ միակ ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից: Ահա թե՛ հաջողությունների, և թե՛ դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար կամ անբավարար լինելն է: Աշակերտի թվով ֆինանսավորման պայմաններում, երբ աշակերտների թիվը դասարաններում բարձր է միջինից, դպրոցն ունենում է բավարար ֆինանսական միջոցներ՝ տարբեր ուղղություններով իր խնդիրները լուծելու համար: Հակառակ դեպքում դպրոցի առջև ծառայած խնդիրները հնարավոր է լինում լուծել խնայողությունների կամ փոքր ներդրումների հաշվին:

Նախորդ տարիների ընթացքում(2018-2021 թթ կտրվածքով) աշակերտների թվի մեծացման հետ կապված մուտքերը պետական բյուջեից աճել են.

Տարեթիվ	Աշակերտների թիվ	Դրամական հոսքեր պետական բյուջեից
2018 թվական	539	95471.9
2019 թվական	608	100260.6
2020 թվական	625	120860.4
2021 թվական	651	130787.3

Հաճախ բյուջետային միջոցների սղություն առաջանում է բյուջեի սխալ պլանավորման արդյունքում, երբ առանց հաշվի առնելու ապասվելիք մուտքերի չափը, ծագում են խնդիրներ աշխատավարձի, եկամտահարկի, կոմունալ վճարումների ուղղությամբ, որը կարող է հանգեցնել կազմակերպական խնդիրների և վարչական պատասխանատվության:

Նպատակն այս ոլորտում

Զարգացնել դպրոցի տնօրենի և հաշվապահի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, ճիշտ, իրատեսական նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, ստույգ հաշվետվություններ կազմելու համար:

Դպրոցի զարգացման համար դպրոցի բյուջեի միջոցներից բացի անհրաժեշտ են համարում.

-Նոր հիմքերի վրա դնել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ ստեղծելու աշխատանքները, որի նպատակը պետք է լինի ներդրումների և նվիրատվությունների մեջ ներգրավել ծնողների, անհատ բարերարների և կամավոր ֆինանսավորողների:

-Այդ գործընթացը թափանցիկ դարձնել ուսուցիչների, ծնողների, բարերարների և պոտենցիալ

կամավոր ֆինանսավորողների համար:

-Դպրոցում ստեղծել շրջանավարտների խորհուրդ, որը հնարավորություն կտա ապահովել տարբեր տարիների շրջանավարտների արդյունավետ և նպատակային մասնակցությունը դպրոցի խնդիրների լուծմանը:

-Դպրոցի բյուջեն լրացուցիչ ֆինանսական միջոցներով համալրելու նպատակով,բացի բարեգործ-բարերարների, կամավոր հովանավորների նվիրատվությունները՝ նախատեսում եմ կազմակերպել լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր և այլ ծառայություններ,բյուջետային մուտքերն ավելացնել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու միջոցով:

4.3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր(դպրոցի կանոնադրություն,տեղայնացված օրինակելի իրավական ակտեր,ներքին իրավական ակտեր),դրանց վարումը

Ուսումնական հաստատությունն ունի անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ամբողջական փաթեթ՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության ենթակա փաստաթղթերի անվանացուցակի:

Դպրոցի տնօրենը պետք է վստահ լինի, որ ցանկում թվարկված փաստաթղթերի լրացման կարգերը առկա են և դրանք լրացվում են այդ կարգերի հիման վրա, ինչպես նաև նշված փաստաթղթերը և դրանց վարումը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին :

Նպատակն այս ոլորտում

- Ձարգացնել դպրոցի տնօրենի և նրա տեղակալների կարողությունները՝ օրինակելի փաստաթղթերի հիման վրա դպրոցական փաստաթղթեր ստեղծելու համար:
- Ձարգացնել դպրոցի տնօրենության և մանկավարժների կարողությունները ԴԿՏՀ համակարգում,ԿԳՄՄՆ պաշտոնական կայք էջում իրականացվող աշխատանքների բարձր որակ ապահովելու համար,դպրոցի պաշտոնական կայքը,ֆեյսբուքյան էջերը բարձր մակարդակով վարելու համար:
- Հաստատության ուսումնական պլանը պետք է կազմվի սովորողների,ոչ թե ուսուցիչների կարքիներին համապատասխան,որն արդեն դարձել է նոր չափորոշչային պահանջ:

Կազմել և կառավարման խորհրդի հավանությանը ներկայացնել

-Դպրոցի զարգացման տարեկան ծրագիրը.

-Հաստիքացուցակը՝ համաձայն մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի ու

նկարագրի, և այդ ցուցակում կատարվող (հավանական)

փոփոխությունները տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարներով,

-Տարիֆիկացիոն ցուցակը,

-Տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

**4.4. Կառավարման և խորհրդակցական մարմիններ, համագործակցությունը
համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու
կազմակերպությունների հետ**

ա/ Կարևոր է ընդլայնել դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները հետևյալ ուղղություններով՝

- դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցի հիմնանորոգման վերաբերյալ լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

բ/ Դպրոցում արմատապես բարելավել ծնողական խորհրդի գործունեությունը և ծնողներին ընդգրկել ուսման և դաստիարակության կարևորագույն գործառույթներում: Կարևորել ծնողական խորհրդի հետևյալ լիազորությունները՝

- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում
- ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում
- մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին
- ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
- աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես

սովորողների սոցիալ-կենցաղային խնդիրների կարգավորման հետ կապված:

Այդ նպատակով ճշտել՝

1. դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնք օգտվում են <<աջակցության>> ծրագրից
2. երկկողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը
3. միակողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը
4. գոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը
5. հաշմանդամ աշակերտների թիվը
6. նյութապես անապահով սովորողների կազմը
7. ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը
8. միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները
9. աշակերտների թիվը, որոնց ծնողները հաշմանդամ են
10. աշակերտների թիվը, որոնք դասերին չեն հաճախում վարձու աշխատանք իրականացնելու պատճառով,
11. այն աշակերտների թիվը, որոնք անչափահաս են, սակայն ընդգրկված են որոշակի աշխատանքներում,
12. աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

Վերլուծության հիման վրա առանձին կառույցների և դրանց ներկայացուցիչների միջոցով բարելավել աշակերտների սոցիալական պայմանները:

գ/ Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:

Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտական ինքնավարության միջոցով:

- ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման միջոցով:
- ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:
- ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:
- աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

4.5. Աշակերտական համակազմը

Պետական դպրոցների համար կարևոր հիմնախնդիր է աշակերտական համակազմի համալրումը, որն էլ պայմանավորում է դպրոցի գոյությունը, զարգացումը, ֆինանսական, նյութական բարեկեցիկ վիճակը, դպրոցի առջև ծագած շատ խնդիրների /նյութատեխնիկական բազա, ուսումնական անհրաժեշտ միջավայր, աշխատավարձ և այլն/ լուծումը:

Նպատակն այս ոլորտում

Բարձրացնել դպրոցի վարկանիշը, ապահովել հասարակության և աշակերտական, ծնողական միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից: Հետևողականորեն աշխատանք տանել մանկավարժական կադրերի ճիշտ ընտրության, մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների և մեթոդական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ, որը կապահովի մատուցվող կրթական ծառայությունների որակը: Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները և հմտությունները սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:

Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման խնդիրներն իրականացնելիս օգտագործելու են աշակերտական խորհրդի որպես սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմնի հնարավորությունները, քանի որ դա նպաստելու է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը:

Անհրաժեշտ են համարում նաև՝

- Դպրոցի նորմատիվային պահանջների ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում,
- Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանում պետական կրթական չափանիշներին համապատասխան,
- Սովորողների կրթության բովանդակային կառուցվածքի վերազինում, սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրի կազմման և իրականացման միջոցով,
- Արտադասարանական խմբակների ստեղծում այն հաշվարկով, որ դրանցում ընդդրկվածությունը հասնի 50%-ի,
- Առարկայական օլիմպիադաների տարածքային, մարզային և հանրապետական փուլերին առավել ակտիվ մասնակցություն,
- Սովորողների կրթության և դաստիարակության հետ առնչվող մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում,
- Սովորողների շահագրգռում՝ հետազոտական աշխատանքներ կատարելու, նրանց համար վարչարարական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում

4.6. Մանկավարժական համակազմը, նրա որակական բարելավումը

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման:

Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսուժական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսուժասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:
7. Գիտի տարիքային հոգեբանությունը:
8. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
9. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձագման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ռազմավարություններից մեկը: Այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010թ.

N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում, այսինքն՝

ա. Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:

բ. Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել

ատեստավորման:

գ. Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

դ. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:

ե. Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:

զ. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ: Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ:

է. Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, lid.armedu.am, emis.am և այլն):

Նախատեսում է աջակցել մանկավարժներին մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար:

4.7. Ուսումնական միջավայրը: Ուսումնական և դաստիարակչական համակարգի կատարելագործում

Ուսումնական միջավայրը դա շենքային և նյութատեխնիկական բազայի, այսինքն՝ ֆիզիկական բաղադրիչի և ուսումնական ու դաստիարակչական միջավայրի համապատասխան միջավայրի ամբողջությունն է: Դա դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթն է՝ դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունը:

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում ուսումնական և դաստիարակչական համապատասխան միջավայրի ստեղծումը կնպաստի երեխաների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը, առողջության պահպանմանը:

Այս առումով դպրոցում կարևորում եմ նախ տնօրենի, ապա տնօրենի ուսումնական աշխատանքի

գծով, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալների, տնտեսական աշխատանքների պատասխանատուի, բոլոր ուսուցիչների, զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) և մյուսների (գրադարանավար, հավաքարար և այլն) դերը և անձնական օրինակը:

Շարունակելու եմ ապահովել ուսումնադաստիարակչական գործընթացի վերոնշյալ բոլոր օղակների փոխկապակցված աշխատանքները և կենտրոնացնել նրանց ջանքերը դպրոցի զարգացման խնդիրները լուծելու համար՝ չմոռանալով արդեն իսկ մշակված և իրականացվող պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ծրագիրը:

Հանուն ազգային հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրման պետական խորհրդանիշների (Հայաստանի Հանրապետության զինանշան, Հայաստանի Հանրապետության դրոշ, Հայաստանի Հանրապետության օրհներգ), ազգային ինքնության և անկախության բաղկացուցիչների (անաղարտ մայրենի լեզու, ընտանիք, Հայաստանյազ առաքելական սուրբ եկեղեցի, Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագիր, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության Նախագահ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, հայոց բանակ, գործադիր և դատական մարմիններ, մայրաքաղաք, ազգային դրամ) բովանդակության նպատակային պահպանումը և տարածումը:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի կառավարման արդյունավետությանը կնպաստի իմ՝ որպես տնօրենի, և դպրոցի կառավարման խորհրդի՝ կոլեգիալ կառավարման մարմնի, լիարժեք համագործակցությանը ուսումնադաստիարակչական և կադրային քաղաքականության բնագավառում, բարենպաստ ուսումնական միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը:

Իրականացնելու եմ գործադիր տնօրենի այն լիազորությունները, որոնք սահմանված են դպրոցի կանոնադրության իմ պաշտոնային պարտականությունների ցանկով:

4.8. Կրթության որակը, կրթության մատչելիությունը և մասնակցությունը

Կրթության համակարգի բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները: Այստեղ խնդիրներ չկան: Դպրոցը մատչելի է Աբովյան քաղաքի և շրջակա գյուղերի բոլոր սովորողների համար: Ավագ դպրոցը ավարտում և միջնակարգ կրթության ատեստատ է ստանում սովորողների 100%-ը:

Նորարարական գաղափարների ներդրման շնորհիվ դպրոցի հեղինակության բարձրացումը կրերի աշակերտների թվի աճին: Այս ուղղությամբ պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

Դպրոցում առկա կրթադաստիարակչական միջավայրը նպաստում է երեխաների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը, կրթության որակի բարձրացմանը:

Կրթության որակի մասին հատուկ տեղեկատվություն կարելի է ստանալ նշված չափանիշների միջոցով.

Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը.

- ուսումնական գործընթացի նպատակների և խնդիրների սահմանումը,
- համապատասխան տեխնոլոգիաների կիրառումը,
- ուսուցումը աշակերտների կարիքներին համապատասխանեցնելը,

• ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով, պահանջվող սարքավորումներով, ուսումնական գույքով, տարածքով ապահովվածությունը:

Կրթական գործընթացի կատարողականը.

• կրթական գործընթացում հանձնարարությունները, գործո-ղությունները կատարվում են ժամանակին, անսխալ, ոչ ձևական

• մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ. կատարվող աշխատանքները վերլուծվում են, մշակվում են թերությունները և դրանց հետևանքները վերացնելու գործողություններ:

Կրթական գործընթացի արդյունավետությունը, որակը,

ուսումնական միջոցառումների որակը.

• աշակերտների պատրաստվածության մակարդակը համապատասխանում է նրանց իսկ

պահանջներին և հասարակության կարիքներին, աշակերտների մոտ առկա են անհատական ձեռքբերումներ առարկայական ստուգատեսների, օլիմպիադաների բոլոր փուլերում, հանրապետական մակարդակում իրականացված մարզական առաջնություններում, տարբեր մարզաձևերի առաջնություններում,

- կրթական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ ձևով, մանկավարժները մեթոդապես լավ են պատրաստ-ված, և նրանց կողմից դասերը, միջոցառումները պլանա-վորվում են, համապատասխանում են նպատակին:

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի միջնակարգ դպրոցը իրականացնում է կրթական 4 ծրագրեր՝ նախադպրոցականից մինչև միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն՝ գլխավոր շեշտը դնելով կրթության որակի վրա: Թեև վերջին տարիներին կրթության որակի հիմնախնդիրն առավել շատ քննարկվող հարցերից մեկն է, և դպրոցը նախորդ ուսումնական տարում 100% առաջադիմություն է ապահովել, սակայն որակի վստահելի և արժանահավատ ներքին և արտաքին գնահատման արդյունավետ համակարգ ներդրված չի, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ դպրոցում:

Դպրոցի կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից են աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին և առանձին մրցույթներին:

Կրթության որակի կարևոր ցուցանիշ է նաև շահառուների, այսինքն՝ սովորողների և նրանց ծնողների բավարարվածության աստիճանը, սակայն դրա ուսումնասիրմանը և վերլուծմանը քիչ է ուշադրություն դարձվել: Այնուամենայնիվ, սովորողների և ծնողների կողմից դրական արձագանքներն ավելի շատ են, քան ահազանգերն ու դժգոհությունները: Դպրոցի հիմնական խնդիրներից մեկն էմ համարում կրթության որակի վստահելի և արժանահավատ ցուցանիշներ ունենալը /սովորողների ընթացիկ, ստուգողական, թեստային, քննական աշխատանքների արդյունքներ, շահառուների բավարարվածության աստիճանի ամենամյա ուսումնասիրություն գիտելիքների ստուգման և փոխադրական քննությունների ձևով միջին և ավագ դպրոցում, տվյալների վերլուծություն և այլն/:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է ունենալ որակյալ ուսուցիչներ: Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային

դերը ուսուցչինն է:

Կրթության համակարգի բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները: Այստեղ խնդիրներ չկան: Դպրոցը մատչելի է ոչ միայն Գեղաշենի, այլև շրջակա գյուղերի համար: Ավագ դպրոցը ավարտում և միջնակարգ կրթության ատեստատ է ստանում սովորողների 100%-ը, որոնցից առնվազն 50%-ը շարունակում է կրթությունը հանրապետության և արտերկրի տարբեր ԲՈՒՀ-երում:

4.9. Տեխնոլոգիաները և նորարարությունները

Նորարարական գաղափարների ներդրման շնորհիվ դպրոցի հեղինակության բարձրացումը կբերի աշակերտների թվի աճին: Այս ուղղությամբ պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

Նորարարություն, տեխնոլոգիաներ

- Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումը խթանում է կրթական գործընթացի արդյունավետության և որակի բարձրացմանը: ՏՀՏ արդյունավետ կիրառման կարողությունները աշակերտների մոտ դարձել են կապի, տեղեկատվություն ստանալու և փոխանցելու, սովորելու միջոց: ՏՀՏ-ների կիրառման անջրպետը ուսուցիչների և աշակերտների միջև վնասում է ուսուցչի հեղինակությանը, նվազեցնում ուսուցման կազմակերպման այլընտրանքային և արդիական հնարավորությունները:

Անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել ուսուցիչների ՏՀՏ կիրառումը դասերի ընթացքում
- ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանքներ, ապահովել ՏՀՏ վերապատրաստումներ
- նյութերով հարստացնել ռեսուրս կենտրոնները,
 - Սովորողների և մանկավարժների շրջանում հետազոտական աշխատանքներ կտարելու, նրանց համար վարչարարական հետազոտություններ կազմակերպելու և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում
 - հետազոտական, փորձարարական կրթական այլընտրանքային ծրագրերի իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում:

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Որպես Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, սույն զարգացման ծրագրով նախատեսված հնգամյակում՝ 2021-2026թթ. ակնկալում եմ.

-աշակերտ-ուսուցիչ,աշակերտ-ծնող,աշակերտ-համայնք հարաբերությունների ամրապնդում,

-դպրոցի և ուսուցչի հեղինակության բարձրացում,

-դպրոցի ուսումնականության բազայի հարստացում,

-աշակերտների կրթության որակի բարելավում,

-մանկավարժների կարողությունների հզորացում,

-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում,

-հոգաբարձուների խորհրդի ստեղծում,

2021-2026 թվականներին նախատեսում եմ դպրոցում իրականացնել հետևյալ աշխատանքները,որոնց համար կպահանջվի,ըստ նախնական հաշվարկի,մոտավորապես 50 մլն. դրամ:

-2021թ. ջրահեռացման և ջրի մատակարարման համակարգի նորոգում,

-2021թ. ջեռուցման համակարգի մասնակի տեղադրում ,

-2022թ. ճաշարանի հիմնանորոգման աշխատանքների 1-ին փուլ,

-2022թ. մարզահրապարակի կառուցում,

-2022թ. պտղատու այգու հիմնում,արտադրանքի ստացում և իրացում,

-2023թ. ճաշարանի հիմնանորոգման և կահավորման աշխատանքներ ,2-րդ փուլ,

-2023թ. դպրոցի ցանկապատի կառուցման աշխատանքների վերջին փուլ,

-2024թ. երկու սանհանգույցի հիմնանորոգում /1-ին,2-րդ հարկեր/,

-2024թ. առարկայական երկու կաբինետների վերանորոգում և կահավորում,

- 2025թ. շենքի հիմքի ջրահեռացում և ամրացում ,
- 2025թ.լաբորատորիաների վերազինում,
- 2026թ.ֆուտբոլի դաշտի շինարարություն,
- 2026թ.դպրոցի վերանորոգման ընթացիկ կոսմետիկ աշխատանքներ

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի բյուջեի ճիշտ և խելամիտ կառավարմամբ կարելի է իրականացնել վերոհիշյալ աշխատանքները:

Դպրոցի հիմնախնդիրների լուծման ուղիներից է նաև Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության,նաև ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը,ինչպես նաև հովանավորների ներգրավումը,որի հաջողված փորձը ևս դպրոցն ունի:Դպրոցի կողմից պատշաճ ձևով մրցույթներին ներկայանալը նոր հնարավորություններ է ստեղծում:

6.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ,ՎԵՐԱՀԱՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ կատարվող,ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունները անհրաժեշտ է հաճախակի անդրադառնալ դպրոցի զարգացման ծրագրին, իրականացնել արդյունքների գնահատում պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման, համապատասխան հաշվետվությունների և այլ միջոցներով:

Դրանք պետք է հասանելի լինեն դպրոցի շահառուներին (պետական լիազորված մարմիններ,դպրոցի աշխատակազմ,ծնողներ,սովորողներ,համայնք և այլն):

Դպրոցի զարգացման ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ է պարբերաբար հրապարակել տեղեկատվություն դպրոցի կայքում, իրազեկել մանկավարժներին,ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ:

1. Դպրոցի կառավարման խորհրդի կողմից, առնվազն տարեկան երկու անգամ, դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված զարգացման ծրագրի դրույթների կատարողականների, հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:

2. Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում:

3. Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքների կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումների շարունակական ներգրավումը:

4. Դպրոցի կառավարման խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

28.սեպտեմբեր 2021 թ.
Նաիրա Բաբայան

